

րեալ յարձակեալ, զգաւրսն Պարսից նիզակաւորքն առեալ ընգենուին, ասէին ի խրախուսելն՝ Ա՛ռ Արշակ քաջ: 13 Իսկ յորժամ զենեալ գլխատէին զախոյեանսն, ասէին. Արշակայ զոհ լիջիր:

14 Եւ լեզեոն զաւրուն բազմութիւնն՝ այս ինքն Յունաց զաւրացն սպարակիրն, սոյնպէս եւ Յայոց սպարակիրն զթիկունս ունէր զաւրացն Յայոց, վահանաւք փակեալք զինքեամբք՝ իբրեւ զամուր քաղաք ինչ ի թիկանց լինիցի: 15 Յորժամ տարածանէին ինչ զաւրքն Պարսից զգաւրսն Յունաց եւ կամ զգունդ նիզակաւորացն Յայոց, ի լեզեոն վահանաւորացն Յունաց կամ ի սպարակիրն Յայոց իբրեւ ի բերդ մտեալ հանգչէին: 16 Իսկ յորժամ ոգի առեալ սակաւ մի, եւ անդուստ ելեալ յարձակէին, անթիւս ի զաւրացն Պարսից ընկեցեալ առաջի իւրեանց սատակեալս գլխատէին, խրախուսելով ի նոյն բանս յԱրշակ թագաւորն իւրեանց, անչափս եւ անթիւս ի զաւրացն Պարսից կոտորեցին: 17 Եւ յորժամ դարձեալ սակաւիկ մի ինչ յաղթահարէին զնոսա զաւրքն Պարսից, եւ նոքա իբրեւ ի բերդ ամուր դիմէին ի լեզեոն ի զաւրսն վահանաւորս, եւ նոցա բացեալ զվահանսն՝ զնոսա ի մեջ առեալ փակէին: 18 Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին զգաւրսն Պարսից զաւրքն Յունաց, եւ Տերէնտն ստրատելատ նոցա, եւ գունդքն Յայոց եւ Մուշեղ սպարապետ նոցա: 19 Եւ սակաւութիւնս զախոյեանսն Պարսից ի պատերազմէ անտի. եւ նոցա սահմանապահս կացուցանէին եւ ինքեանք առ իւրեանց թագաւորն Պապ դառնայիս մեծաւ անուամբ եւ բարի ակարաւ եւ հոյակապ շքեղութեամբ:

20 Այլ Շապուհ թագաւորն յորժամ յաշխարհն իշխանութեանն իւրոյ հասաներ, զարմացեալ ընդ քաջութիւն զնոյն կռուոյն որ դիպեցաւ նմա, եւ ասէր՝ եթէ զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի. զի իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատու եւ ի կռիւ մտեալ եմ, եւ բազում ամբ են՝ զի հասի ի թագաւորութիւն, եւ առանց կռուոյ ամ չեմ լեալ. բայց իմ ջերմ կռիւ զայս էր տեսեալ, որ այս անգամս դիպեցաւ ինձ: 21 Չի յորժամ հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին, որպէս զլեռն մի բարձր եւ կամ որպէս զաշտարակ մի հաստաբետս հզաւր եւ անշարժ. եւ յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժեաք, նոքա ի լեզեոն Յոռոմոնց ապաստան լինէին. եւ նոցա զվահանափակսն բացեալ, զնոսա իբրեւ ի քաղաքորմ պարսպաւոր ամրացեալ ընդունէին: 22 Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ, դարձեալ ելեալք մարտնչէին, մինչեւ անմի զգաւրսն Արեաց¹ առնէին: 23 Եւ միւս եւս՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտերմութիւն միամտութեանն հայաստան զնոյն ընդ տիրասիրութեանն: 24 Չի այնչափ ամբ են՝ զի տերն նոցա Արշակ կորուսեալ է ի նոցանէն, եւ նոքա ի պատերազմին ի նա խրախուսէին: 25 Եւ յորժամ զախո-

1 Յոր. Արանց